

վիսարեթու թեանց սիրահարներուն։ Արտօնուած ենք մտածել որ այդ Գրիգոր վանականը միայն մազադաթ չէր հերկեր։ Թէ նման բոլոր ուխտի միաբաններուն, անոր մատները քաղցրագին զգայութիւններով կ'իյնային մահին վրայ, ու հոգին խառնէր անախորժ չէր իր ռուսներուն։ Թէ իր բուռն արձակուած սերմին խարտեալ անձրեւը, աշնան դուռներուն, հնչառցած, վախճողիկաց հողերուն արգանդը զէպի, անոր հոգին ալ կ'սղուէր երկիւղած զգայութիւններով, ինչպէս բառերուն անձրեւը՝ խմացական հնչառքին բարձրագոյն յուզումներովը մարմին էր անոր մաքին ալ զաշտին... Քսաներորդ դարու քննադատ մը, այս ամէնէն թերեւս սիրէ արարքը, հոգը բեղմնաւորելու խորհուրդը, ասոր հօր ձգողութիւնը որ կրնայ անգրադառնալ իր ալ մտքին, իբրեւ մէկ մասնիկը տիեզերական խորհուրդին, այդպէս մարմնացած, կերպարանուած։ Տասներորդ դարու վանականին համար արարքէն գեղեցիկութիւն մը, խորհուրդ մը կը մնան թաղուած, բայց զգացումը, նոյլ ու նոյնին նոյն ատեն, իբրեւ գերագոյն իրականութիւն կը տիրապետէ անոր մտքին։ Այդ Գրիգոր վանականին համար երկուցիկութիւնը սա մեր աշխարհը ունայնութիւն մը չէ, ինչպէս կը պարզուի ասոր հօր, գերագոյն իրականութիւնը արեւելեան մեծ կրօնքներուն խորքէն (Պատարագականութեան Նիքիւսոյն), ալ նախապայելք մը (Չրաքեանին բառը), պատրաստութեան շրջան մը, մաքրագործման հովիտ մը, խելութիւններու, անհունութիւններու, յաւիտեններու միակ իրաւ, միակ արժող աշխարհին։ Չարհամարհել սա մեր աշխարհը, վառնդի հոս ալ Աստուծոյ շունչը կ'ապրի, բիւրաւոր կերպարանքներու տակ, հոս նետուած սերմը բարիք մըն է, յար և նման միւսին որ անհուն անդաստանները կ'արգասաւորէ Աստուծոյ իմաստութեան։ Ասկէ անդին ալ երկինքներու արտերուն մէջ Ս. Հոգիին ցօղը կ'իջնայ ու «կը բարեկործէ»... Հոգեւոր սերմը որ կը թռչի անգրադարձն ըլլալ մարմնաւորին, սա մտածումներու լոյսին ընդմէջէն կ'ըլլայ կեանքին ամէնէն բարձր խորհուրդը։ Ինչպէս կը տեսնէք, որքան քիչ կուգան տողերը, կտոր մը բան քակելու այն ընդարձակ ապրումներէն որոնք հոգեյատակը կը կաղմեն բանաստեղծին։ Ինչ վաւերական, խորովիչ, զարհուրագին հնչառք մը կը թաւալէր անոր ջիւղերուն արտերէն, սակայններուն ահօսներէն երբ իր միտքը հանդերձուած կ'ուզէր, ընդունելու ստուածային շնորհներուն սերմերը...

Յ. ՕՇԱԿԱՆ

(Վերել յաւերտի)



ԼԵԶՈՒԱԳ-ԻՏԱԿԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

Հին ժամանակներից սկսած Իրանի հարթութեանց վրայ բնակուած էին երկու հնդեւրոպական ժողովուրդներ, որոնք լեզուով ու քաղաքակրթութեամբ իրար շատ մօտիկ էին. դրանք էին մարերն ու պարսիկները։ Մարերը գտնուում էին Ուրմիոյ լճից դէպի արեւելք, իսկ Պարսիկները՝ նրանցից հարաւ, Պարսից ծոցի շուրջը։ Ամէն անկազմակերպ ազգի պէս՝ սրանք էլ բաժանուած էին բազմաթիւ ցեղերի և դեռ մի քաղաքական ամբողջութիւն և ուժ չէին կազմուած։ Ասորեստանցիք արշաւելով այս ցեղերի վրայ, շատերին հպատակ էին դարձրել, բայց տեղի դժուարութեան պատճառով ամբողջ երկիրը իրենց իշխանութեան տակ չէին առել։ Ն. Ք. 7^{րդ} դարում մար ու պարսիկ ցեղերը հաւաքուեցին մէկ իշխանութեան շուրջը և կազմեցին մի պետութիւն, որի նշանաւոր ներկայացուցիչն եղաւ մարաց թագաւոր Կիաքսարը։ Կիաքսարը ոչ միայն կարողացաւ թօթափել ասորեստանցոց լուծը, այլ և արշաւեց Նինուէի վրայ, առաւ ու կործանեց և վերջ տուաւ Ասորեստանցոց պետութեան (608)։ Այսպէս հիմնուեց մարական պետութիւնը, որի նշանաւոր մայրաքաղաքն եղաւ Եկբատանը (արդի Համադանը)։

Օգուտ քաղելով արեւելքի խառնակ դրութիւնից, որ յառաջացել էր Կիւմերների և Սկիւթացիների արշաւանքով, բուլղովին ազանով իրենց արեւելեան ու հարաւային սահմաններից, մարերը յառաջացան դէպի արեւմուտք։

Այս աշն ժամանակն էր երբ Արմէնները մտնում էին Ուրալիւ և Ուրալիացիք արդէն ուժասպառ՝ չկարողացան դիմագրել արեւմուտքից յառաջացող հայերին և արեւելքից յառաջացող մարերին։ Նրանք տեղի տուին Շուտով Վանայ և Ուրմիոյ լճերի միջև գտնուած տեղերը անցան Մարաց իշխա-

(*) Վերցուած՝ մեծամուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Թ. Գրուխ)։

նութեան, Հայերը բարեկամական դաշինք կապեցին Մարերի հետ և նրանց գերելխանութեան տակ հիմնեցին վստախ պետութիւն։ Մարերը Հայոց վրայով անցան դէպի Փոքր-Ասիա և տիրեցին մինչև Ալիս գետը գրեթե նրաձե երկրներին։ Ալիսը դաշնադրութեամբ դարձաւ Մարաց և Լիւզիական պետութեան սահմանը (585)։

Այս գէպքից քիչ յետոյ Պարսիկները՝ որ Մարաց գերելխանութեան տակ մի վստախ պետութիւն էին հիմնել, յանկարծ ապստամբեցին. նրանց թագաւորը Կիւրոս արշաւեց Մարաստան և Մարաց պետութիւնը կործանելով հիմնեց Պարսից պետութիւնը, որ մէկ անգամից ժառանգեց Պարսից ծոցից մինչև Ալիս գետ գտնուած բոլոր երկիրները (549)։ Այսքանը բաւական չէր։ Պարսիկները իրենց յառաջխաղացութիւնը սփռեցին ամէն ուղղութեամբ և 40 տարուայ մէջ տէր դարձան Ասորեստանցոյ, Լիւզիացոյ եւ եգիպտական պետութեանց նուաճած բոլոր հողերին։ Նրանք հիմնեցին մի աշխարհի խոշոր պետութիւն, որի նմանը դեռ աշխարհը չէր տեսել։ Ասորի և Ափրիկէի բոլոր ծանօթ երկրները, Կովկասեան լեռնաշղթայից եւ Սիւրբիւրոյ տափաստաններից մինչև միջին Ափրիկէի անապատները եւ Հնդկաստանի ու Չինաստանի անձանթ դաշտավայրերից մինչև Միջերկրական ծովը և մինչև Դանուբ գետը հպատակուում էին պարսից պետութեան։

Հայերը, ինչպէս Մարաց, Նոյնպէս եւ Պարսից պետութեան հպատակութիւնը հաւատարմութեամբ շարունակեցին մինչև 522 թիւը։ Այս թուին՝ Կամբիսի մահից յետոյ, Պարսից պետութեան ամէն կողմը ապստամբութիւններ ծագեցին։ Ապստամբեց նաեւ Հայաստանը։ Բայց Պարսից նոր զահակալը Դարեհ, ընկաւ աջ ու ձախ եւ բոլոր ապստամբներին նուաճեց։ Դժուար եղաւ Հայաստանի նուաճումը, որի համար Դարեհ 5 արշաւանք կազմակերպեց և միայն վերջին անգամ կարողացաւ ընկճել Հայերին (519)։ Իբրեւ առանձին առանձնաշնորհութիւն, նա Հայաստանից կազմեց մի սատրապութիւն՝ թագաւորական տիտղոսով։

Այս վիճակը տեսցնելով դար, մինչև Աղեքսանդր Մակեդոնացին, որ Պարսից պետութեան վերջ տալով՝ մինչև Հնդկաստան իր իշխանութեան տակ առաւ։

Մակեդոնացոյ եւ Սելեւկեանց լուծը կրելուց յետոյ, Հայերը անկախութիւն ձեռք բերին 189 թուին և իրենց իշխանութիւնը մինչև Կուրի հովիտը հասցրին։ Այդ ժամանակ արդէն Պարսկաստանում էլ հիմնուել էին մի քանի իրանական պետութիւններ, ինչպէս Հայաստանի կողքին Ատրպատականը, աւելի արեւելք՝ Մարաց և Պարթեւաց պետութիւնները։ Այս բոլորից աւելի նշանաւոր էր Պարթեւաց պետութիւնը։

Պարթեւները արիւտական մի ցեղ էին, որ սկզբում թափառում էին Միջին Ասորի մէջ, Օքոսոս գետի վերի կողմերում։ Արշակ անունով մի իշխանի առաջնորդութեամբ նրանք գաղթեցին Կասպից ծովի հարաւ արեւելեան կողմը (Խորասան) և աշխուղ հիմնեցին պարթեական պետութիւնը (250)։ Հետզհետէ զօրանալով՝ նրանք հասան Միջագետք ու Բաբելոն և իրենց մայրաքաղաքն էլ Խորասանից փոխադրեցին Տիգրոն։ Ծուռով Հայերն ու Պարթեւները իբրեւ երկու մրցակից պետութիւններ իրար դէմ դուրս եկան. Տիգրան Մեծը նուաճեց Ատրպատականը, Մարաստանը, Միջագետքը և պարթեական պետութեան մի մասին տէր դարձաւ։ Հռովմայեցիներից պարտուելով՝ նա ստիպուեց թողնել այս երկրները և ամփոփուել Հայաստանի նախկին սահմաններում (66)։

Այս թուականից սկսում է մի երկարատեւ պատերազմ Հռովմայեցոց և Պարթեւների միջեւ. երկու կողմերը աշխատում են ձեռք բերել Հայաստանի գերելխանութիւնը։ Հայերը մերթ մի կողմ և մերթ միւս կողմ յարելով՝ պահպանում են իրենց գոյութիւնը. բայց ընդհանրապէս ուժեղ է պարթեասէր կուսակցութիւնը։ Վերջապէս կողմերի միջև համաձայնութիւն է կայանում՝ որ Պարթեւաց թագաւորի եղբայրը Տրդատ՝ թագաւոր նստի Հայաստանի վրայ, բայց իր թագը ստանայ Հռովմից։ Այսպէս սկսում է Հայաստանում Արշակունեաց հարստութիւնը (66), որ խաղաղութիւն է բերում երկրին։

221 թուին Արտաշիւր Սասանեան անուն մի իշխան, որ Պարսից ծոցի ոահմաններում էր նստում, ապստամբում է պարթեւաց թագաւորի դէմ և սպանելով նրան՝ տիրում է զահին։ Թագաւորական տոհմերի փոփոխութիւնը անշուշտ առանց ազդեցու-

թեան պիտի մնար, եթէ այն փոփոխութիւնը իր հետ չբերէր նաեւ քաղաքականութեան փոփոխութիւն։ Պարթևները առհասարակ կրօնի մէջ աղատամիտ եւ հելլէնականութեան կողմնակից էին, իսկ Սասանեանները զրոգաշտական կրօնի մուսուլման հետեորդ, հելլէնական քաղաքականութեան թշնամի եւ Հռովմայեցւոց ոխերիմ հակառակորդ էին։ Այս պատճառով էլ սկսեալ է պատերազմների աւելի բուռն մի շարք Պարսիկների եւ Հռովմայեցւոց միջեւ։

Արովհետեւ Հայաստանում նստում էր Արշակունցի տոհմը, իսկ Սասանեանները թշնամի էին այդ տոհմին, ուստի նրանք աշխատում են ջնջել այդ տոհմը։ Արշակունցներն էլ իրենց գահը պաշտպանելու համար անցնում են Հռովմայեցւոց կողմը, եւ այսպէս Հայաստանը, որ նախապէս Հռովմայեցւոց թշնամի եւ Պարսիկներին բարեկամ էր, քսնում է հակառակ դիրք։ Շուտով թէ՛ Հայերը եւ թէ՛ Հռովմայեցիք քրիստոնեայ են դառնում, եւ այս կրօնակցութիւնը մի աւելի ուժեղ պատճառ է դառնում, որ Հայերը երես դարձնեն Պարսիկներից եւ մօտենան Արեւմուտքին։

Ահա այս ժամանակից սկսում է պատերազմների երկրորդ շարքը Սասանեան պարսիկների եւ բիզանդական կայսրների միջեւ, Հայաստանի տիրապետութեան համար։ Փոփոխակի յաջողութիւնից յետոյ Պարսիկները համաձայնութեան են գալիս Յոյների հետ եւ Հայաստանը բաժանում են իրենց մէջ (384), դարձնելով երկրորդ վասալական իշխանութիւն, իսկ աւելի յետոյ էլ այդ անուանական իշխանութեան վերջ տալով՝ Հայաստանը դարձնում են պարսկական մի նահանգ (428)։ Շատ անգամներ Հայերը ապստամբում են իրենց անկախութիւնը ձեռք բերելու համար, բայց ժամանակաւոր յաջողութիւնից յետոյ նորից զբաղւել են խոնարհւնքում, մինչեւ գալիս են Արաբները, եւ Պարսկաստանը նուաճելով՝ պարսից իշխանութեան վերջ տալիս (642)։ Արանից քիչ յետոյ Հայաստանն էլ ընկնում է Արաբների տիրապետութեան տակ։

Հայ եւ Պարսիկ ժողովուրդները իբրեւ հարեան ապրում են արաբական լծի տակ, մինչեւ թ. դար, երբ օգուտ քաղելով արաբական իշխանութեան թուլութիւնից, եր-

կուսն էլ կազմում են անկախ պետութիւններ։ Հայաստանում հիմնում է Բագրատունեաց պետութիւնը հիւսիսում, եւ Արծրունեաց պետութիւնը՝ Վանայ լճի շրջանում։ Պարսկաստանում հիմնում են Թահիրի հարստութիւնը Սորասանում, Սաֆարի հարստութիւնը Աֆղանիստանից մինչեւ Միջագետք, մի առանձին օստիկանութիւն Ատրպատականում եւ յետոյ Սամանի թաթարական պետութիւնը Սորասանից մինչեւ Միջագետք, Բուլխների պետութիւնը Շիրակից Բաղդատ, որոնց յաջորդում է Ղազնևիների սուլթանութիւնը՝ որ տիրում է Աֆղանիստանին, Բելուճիստանին, Հնդկաստանին եւ զրիթէ ամբողջ Պարսկաստանին։

Ժ.Ա. դարի հետ սկսում է թուրքական Սելճուք ցեղի առաջխաղացումը Միջին Ասիայից՝ նրանք մեծ բազմութեամբ կասապից ծովի հարաւային եզրերքով գալիս են արեւմուտք, սուպատակում են մինչեւ Ատրպատական, Միջագետք ու Հայաստան, եւ նրանց առաջնորդը Տուղրիլ՝ Սորասանի մէջ թագաւոր յայտարարելով իրեն՝ զբաւում է ամբողջ Պարսկաստանն ու Միջագետքը։ Քիչ ժամանակից Սելճուքները կազմում են մի ահագին կայսրութիւն, որ փուլում է Չինաստանից մինչեւ Աֆրիկէ։ Պետական տիրապետութեան հետ միաժամանակ տեղի ունեցաւ թուրք ազգաբնակչութեան տիրապետութիւնը Պարսկաստանի հիւսիս արեւմտեան գաւառներում, յատկապէս Մարաստանում եւ Ատրպատականում։ Ինչպէս Ղազնևիների պետութիւնը, նոյնպէս եւ պարսիկ ազգաբնակչութիւնը յետքաշուեցին դէպի արեւելք, երկրի աւելի խորքերը, մնացորդները ձուլուեցին թըրքական բազմութեան մէջ, այնպէս որ այդ ժամանակից սկսած՝ վերացաւ պարսկերէն լեզուի գործածութիւնը Հայաստանի սահմաններից սկսած մինչեւ Ղազնևն եւ վերջ տրուեց Հայերի հարեանութիւնը Պարսիկների հետ։

Եթէ ամփոփենք մինչեւ այժմ ասուածները, կը տեսնենք որ Հայերը իրանական ցեղերի հետ հարեանութեան մէջ ապրել են ամբողջ 1600 տարի (ն. Ք. 7րդ դարից մինչեւ յ. Ք. 11րդ դարը)։ Այդքանից մօտ 900 տարի Հայերը կա՛մ ուղղակի հպատակ էին Պարսից եւ կա՛մ Պարսից գերիշխանութեան տակ կազմում էին վասալական իշ-

խանութներն: Որոշակապես 700 տարին թէև անկախ կամ արտարկան հպատակութեան տակ, բայց միշտ չլիման մէջ էին Պարսից հետ՝ պատերազմների և այլ պատճառներով: Հպատակութեան ժամանակ Պարսկաստանից ուղարկուած սատրապները, մարզպանները, հարկահանները և այլ պաշտօնեաներն ու զօրքը անշուշտ հայերի հետ հայերէն ու զօրքը անշուշտ հայերի հետ հայերէն չէին խօսում, այլ պետական պարսկ լեզուով: Արշակունեաց հարստութիւնը պարսկալեզու էր: Հայաստանի գահակալները յաճախ Պարսից թագաւորի և պարսկերէն էին խօսում: Հետագայում նաև նոյնիսկ անկախութեան ժամանակ՝ պաշտօնի լեզուն պարսկերէն էր: Մեր մատենագրութեան մէջ շատ անգամ յիշատակուած է որ հայերէն գրերի գրութեց առաջ գրականական ու նոտարական բոլոր գրութիւնները, դաշնագրութիւնները, հրովարտականները, նոյնիսկ հասարակ կեանքի սովորական գրութիւնները պարսկերէն էին լինում, ոչ միայն հեթանոսութեան, այլ և նոյնիսկ քրիստոնէութեան ժամանակ, Պարսիկ ու Հայ թագաւորներն ու աղանակները իրար հետ փոխադարձ խնամութիւն էին կնքում: Հայոց հաղուստը, զէնքը, վարչական կազմակերպութիւնը, ամէն ինչ պարսկական ոճով էր: Արշակունեաց ժամանակ և աւելի առաջ նոյն իսկ Հայոց կրօնը զրադաշտական կրօնի մի ձևն էր, ինչպէս ցոյց են տալիս Արամազդը, Անահիտ, Վահագն, Միհր, Տիր աստուածութեան անունները, որոնք ամբողջապէս իրանական են: Պարսկերէն լեզուն նոյն իսկ գրեզացիք գոնէ մասամբ գիտէին. երբ Քսենոփոնի յունական բանակը Հայաստանից էր անցնում, հայ գրեզացի կանայք և աղջիկները հարցրին նրանց թէ ովքեր էին, և իրենց թարգմանը պարսկերէն լեզուով պատասխանեց նրանց թէ թագաւորի կողմից են գալիս և սատրապին են գնում (Անաբազիս Դ. 5, 10): Երբ Քսենոփոն և Քսենոփոն ուղոււմ էին իմանալ թէ ինչ երկրում էին գտնուում, պարսկախօս թարգմանի միջոցով ուղղեցին իրենց հարցումը գիւղի տանուէրին (Անաբ. Դ. 5, 34): Վերջապէս անուրանալի է որ հայ կեանքը ամբողջապէս գտնուում էր պարսկական կուլտուրայի ուժեղ ազդեցութեան տակ նախքան քրիստոնէութիւնը: Քրիստոնէութեան

թիւնը եկաւ ու ծագնելու Հայերին Պարսկերէնից, Հայերը կրօնով ու լեզուով հետացան նրանցից, բայց շատ սովորութիւններ, պետական կարգ ու կանոնը դեռ մնում էր պարսկական:

Ահա այս ընդարձակ յարաբերութեանց և կուլտուրական ազդեցութեան արդիւնքն այն եղաւ որ հայերէն լեզուն մեծապէս ազդուեց պարսկականից և վերջից նրանից բազմաթիւ բառեր, ոճեր ու դարձուածներ: Այնքան՝ որ զարմանալի թող չլինի, եթէ ասենք որ կարելի է գրել ամբողջ էջեր, որոնք հայերէն ու պարսկերէն համարեա նոյն դուրս կուգան:

Ահա այսպիսի երկու նմուշ, որ յատկապէս կազմել եմ հետաքրքրութեան համար.

Եկ բիգիւն բեմեղումի հեզար դիրամ փուլ դադ վե նոյ ման զաման գադ. ին մեղում քեզգեր՝ բուլ վե բա շահար շաւ գիրգանե խանութի քեզգերի բազ քեդ. դեհ ման քեզիւն քե քեզիւն բիգիւն բե խանութի քեզգեր ամեդ, բա զաման ի փուլ դադան ռեսիդ. չիրա փուլի ման քեզիւն. քեզգեր ու շահար շաւգիրգանե փասուլս դադանգ. եյ բիգիւն հուցարմանգ. անչե քի բու քեզմայի, դուստ աս. զաման բիգիւն քիլ քիլ բիգիւն. բիգիւն խանութի եդ քեզգեր բազոր գիրիւն վե բեբադիրգանի դադ վե փուլս գիրիւն:

Մէկ բիւլի մի մարդու հազար դրամ փող տուեց և ինն ամիս ժամանակ տուեց: Այն մարդը կոշկակար էր և իր չորս աշակերտով խանութ կոշկակարի բացեց: Յետ տասը ամիս՝ բիւլը ի խանութ կոշկակարի եկաւ թէ ժամանակը փող տալու հասաւ. ինչո՞ւ փողը չտուիր: Կոշկակարն ու չորս աշակերտները պատասխան տուին. Ո՞վ բիւլը հնարամիտ, այն ինչ որ դու հրամայեցիր, դրուստ է. ժամանակ տուր, քիլ քիլ կը տանք: Բիւլը խանութ կոշկակարից գրաւեց և մի վաճառականի տուեց և իր փողը գրաւեց:

Ֆերմանգար ի բուզուրկ ու զօրաւեր փալիզի դաւս. ժգեր ին փալիզ քեկ բուսան բուլ. դերի ին բուսան գուհերի ու զու մուրութի ու յակուդի բուլ, քե փալիզի յա ագուրի. բեր դերի գուհերի դիւքեայի ռեմգուրեմգ. դեր բուսան վերդ ու միխակ ու քիլուներ ու սուսեն ու ռիման ու յասեմին ու մեքեմա ու սուբուլ ու քեզիւն

ու շահասպարհ, հեմե ռեցլառենց ու գոնադոյն, սեֆիդ ու ֆեբուդ ու լազվերդի. հեզար ու բիվեր սարեֆա բեր բուրջ ու գուրուհի ֆեշլենա բեր գումբար, դեֆ ու բուրբակ ու ֆու միզենենգ: Ժալե բեր մեմեֆա նիբեսրե, շուլե բարվարդ նիբեսրե, դուխսերի ֆերմանդար դեռ փալիզ բեր բալիե նիբեսրե, հմչու ֆերիեսե, գիսու ի ամբերբու փիրասես, աբրանցանի բուսեսդ բե բազու, բազ բար նակաս, հմչու փեյֆեր ու նիզար միխենդիդ:

Հրամանատարն վզուրկ ու զօրաւոր՝ մի պարտէզ ունէր. այն պարտէզում մէկ բուրաստան կար, դուռն այն բուրաստանի գոհարէ ու զմրուխտէ ու յակինթէ էր, ոչ աղիւսէ կամ ագուռէ: Ի վերայ դրան գոհարի՝ դրօշակներ երանգ երանգ. բուրաստանում վարդ ու մեխակ ու նուռուֆար ու շուշան ու ռահան ու յասմիկ ու մանիշակ ու սմբուլ ու նարկիզ ու շահասպարհ, համակ երանգ երանգ ու գոյնզգոյն, սպիտակ ու կապոյտ ու լազուարթ. հազար ու բիւր սարեկներ բուրգի վրայ և գրոհ կաշաղակաց ի վերայ գմբեթի՝ դափ ու թըմբուկ ու գոս կը զարնէին: Շաղն ի վերայ մանուշակի նստած, շողն ի վերայ վարդի նստած, դուստրը հրամանատարի՝ պարտէզում բալիշի վրայ նստած՝ ինչպէս հրեշտակ. գէսն յամբարարոյր պատրաստած, ապարանջանն բուստէ ի բազու, թագն ի ճակատ, ինչպէս պատկեր կամ նկար կը խնդար:

Հայերէնի և պարսկերէնի նմանութիւնը այնքան մեծ է, որ լեզուարանները մի ժամանակ կարծում էին թէ հայերէնն էլ իրանական լեզու է, այսինքն զաւակն է իրանական մայր լեզուի, որի միւս դուստրներն են պարսկերէնը, աֆղաներէնը, բելուճերէնը, քրդերէնն ու օսեթերէնը: Հիւրչման գերմանացի հայագէտն եղաւ՝ որ առաջին անգամ ապացուցեց որ այս կարծիքը սխալ է, թէ հայերէնը իրանական ընտանիքի մէկ անդամը չէ, այլ նրանից անկախ ու նրան հաւաստր մի ճիւղ, այնպէս ինչպէս յունարէնը, լատիներէնը, հին սլաւերէնը են: Այս մասին պիտի խօսինք քիչ յետոյ:

Հայերէնի և իրանական լեզուների նման բառերը բաժանուում են 4 խմբի:

1. Այն բառերը՝ որոնք թէ՛ հայերէնը և թէ՛ իրանեանները ժառանգել են հաւասարապէս հնդեւրոպական նախամայր լեզուից. ինչ. մայր = պրս. մադար, հն/ս. դեկմ = տասը և պրս. դան, զնդ. դաւա.

2. Այն բառերը՝ որոնք հայերէնը փոխ է առել պարսկերէնից. ինչ. սպարապետ = հպրս. սպարապասի, իւսթմուդ «ջայլամ» = պրս. շուսուրմուդր.

3. Այն բառերը՝ որ թէ՛ հայերէնը և թէ՛ պարսկերէնը փոխ են առել մի երրորդ աղբիւրից. ինչ. անպարար.

4. Այն բառերը՝ որոնք պարսկերէնը փոխ է առել հայերէնից. ինչ. բարեկենդան = պրս. բուրղանդան, աղիւս = պրս. ախիզ ևն:

Իւրաքանչիւր բառի համար անհրաժեշտ է ճշտել թէ այս չորս խմբերից որի՞ն է պատկանում, որպէսզի կարելի լինի այնուհետև դուրս գցել 1, 3 և 4 խմբի բառերը և առնել միայն 2-րդ խմբի բառերը, հենց սրանով էլ իմանալու համար պարսկական լեզուի ազդեցութիւնը հայերէնի վրայ: Բաւական զիւրին է ճանաչել 3-րդ խմբի բառերը. երբ մի բառ հայերէնից ու պարսկերէնից դուրս գտնուում է նաև մի երկրորդ լեզուի մէջ և ստուգաբանում է հենց այդ լեզուով, ուրեմն և պատկանում է այդ լեզուին: Այսպէս հ. անպարար բառի արմատն է անպ, որ գտնուում է թէ՛ պարսկերէնի և թէ՛ արաբերէնի մէջ անպալ՝ «զարմանալիք» ձևով: Բայց այս բառը զուտ արաբական արմատ է, ինչպէս ցոյց է տալիս կոկորդական հնչումը՝ որ միայն արաբերէնին է յատուկ. ուրեմն այս բառը արաբերէնից է մտել մեր մէջ և ոչ թէ պարսկերէնից: Նոյնպէս մեակ բառը՝ որ կայ թէ՛ պարսկերէնի մէջ մուշակ ձևով և թէ՛ վրացերէնի մէջ մուշակի ձևով. բայց ըստ որում բառը ստուգաբանում է վրաց. մուշա արմատով, ուստի և բուն վրացական բառ է և ոչ թէ պարսկերէն:

4-րդ խմբի բառերը ճանաչելու համար պէտք է քննել թէ արդեօք այդ բառը կարելի՞ է հայերէնով ստուգաբանել և կամ հետեւում է մի այնպիսի ձայնական օրէնքի որ միայն հայերէնով կարելի լինի մեկնել:

Այսպէս բարեկեցական ստուգարանում է բարի-կենդանութիւն բառերով, մինչդեռ պրտ. բարդանդամ ոչ մի մեկնութիւն չունի. ուստի պարզ է որ բոլոր հայերէն է և հեռեւոր փոխառուն պարսկերէնէն է: Նոյնպէս արդի պրտ. Շամբալա, Շումբալիլա «մի տեսակ չաման», որ պարսկերէնով ոչ մի մեկնութիւն չունի, կարող է ստուգաբանուել հյ. Շեմալիլէ ձեռով, ուստի և հայերէնից է անցել պարսկերէնի: Աղիւս բոլոր՝ որ կայ նաեւ պրտ. ալիլ ձեռով, անշուշտ հայերէն է, որովհետեւ միայն հայերէն է ձայնն է՝ որ տալիս է ղ, որից և իս (պրտ. իս), իսկ պրտ. իս ձայնը չի կարող բնաւ դառնալ լ: Սրանից հետեւում է թէ պարսկերէնէն է որ փոխ է առել մեղանից ալիլսը, ինչպէս որ նոյնը փոխ են առել նաեւ վրացիք աւելի հին ժամանակ և դարձրել ալիլի:

Յրտ տեսակի բառերը իրենց զիրու-թեան, իսկ 4րտ տեսակի բառերը իրենց սակաւութեան պատճառով մի կողմ թողնելով՝ ուշադրութեան առնենք 1-ին եւ 2րտ տեսակի բառերը, որոնք թէ՛ քանակութեամբ չափ են և թէ իրենց կոնկրետութեամբ տեղիք են տուել խոշոր թիւրիմացութիւնների՝ նոյն իսկ լեզուաբանների մէջ: Իրօք ինչպէս կարելի է իմանալ թէ օր. աւսր, ալբիլ, պասկեր, նկար, աւծար, աւշ, բեռն ևն բառերի մէջ, որոնք այնքան նման են պահլաւերէն աւսուր, պասկար, նիկար, բրդաւսա, աւրճա, պրտ. բար բառերին, որոնք են զուտ հայկական և որոնք են պարսկերէնից փոխառու:

ՊՐՈՖ. Հ. ԱՃՍՈՒՆԱՆ

(Եւրոպայից)



ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԽԵ

(Եղիազար կարողիկոս Հալեպէն առ Եղիա Եպիսկոպոս յերուսաղէմ) (*):

Օրհնութեամբ ծանիք, Տէր Եղիա պաւոնաւոր և մահաւոր Վարդան, որ այս մեր Սաֆարն ի տեղդ հասած օրն զինչ քուր զրեանք և էմբէր որ բերեց ընդ իւր գրող և մօհրով՝ իւրմէն առնէք և պահէք, մինչ զինչ գրեցից՝ այնպէս առնիցէք և իւրեանք քսան զուռուշ տալք, և յառաջմանէ թէ՛ յինքն և թէ իւր տունն փող ինչ տուեալ էք՝ չլիշէք, զի մեզ էմաքաւոր է, և ի մեր ձեռն գատ մի չկար որ իւրեանն տալաք, մնաց մեր վրան պախի, և ձեզ Աստուծով ի մօտոյ թուղթ գրելոց եմք, զի սա անդէպ ժամու ել ի ճանապարհ, նա՛ և զամենայն ինքն գիտէ զեղեալն մեր և սուտն աւելի: Եւ Մուրատն թէ մնայ ի հօտ, լաւութեամբ ընկալարո՛ւք, զի շատ աշխատեցաւ, և ի գործ ինչ կացուցէք, և թէ գնայ՝ Տէր առ ինքն և առ ամենեւեանդ. բաւեցի: Յաւտար երկիր իւրաքանչիւր զլուսնուն չափ թող ուտեն բաց ի մին մատէն իւրեանց գրած թղթերովն. զիս իմ ցաւս թողէք. բաւ է, և զձեր աչքն իմ Տանձմբիս առնէք, զի էմէքտար է ի վերայ մեր:

ԽԶ

(Յովնան Եպիսկոպոս Ադրիանուպոլսէն առ Եղիազար կարողիկոս ի Հալեպ) (*):

Գերափառ և հրաշագարդ, վսեմափառ և մեծապատիւ հանճարեղութեամբ գերեւեալ տէրութեամբ, համայնից սիրելի և բազմաց ցանկալի տեառնդ մերոյ Եղիազար սրբազան կաթողիկոսի, վերատեսուչ և առաջնորդ սուրբ յերուսաղէմայ մեր հայոց ազգի: Նուապտ ծառայ Անդրիանոյ Յոհան

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է. «Նոյեմբերի ԺԳ. Տանձմբին հետ յերուսաղէմ գրիած գրին սուրաթն է»:

(**) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է. «Գիրս այս յինքնագործմն թուին, եհաս առ մեզ չորեքստասան կնքիւք քաղարին եւ կնքիւ Յովնան Եպիսկոպոսին, զոր կայ եղեալ յարկեղս: Նուապտ տեառն Սուրբապ վկայեմ գայս»: